ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2019/13/1-8

ք. Երևան 19 դեկտեմբերի 2019թ.

Առողջապահության նախարարության աշխատակազմը, ի դեմս գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Արտյոմ Սմբատյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Վահագն Թորոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 2 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 2 օրից ավելի,

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 26.600.000,00 (քսանվեց միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝

մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[22]: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

---

[22] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Առողջապահության նախարարություն Կառավարական տուն 3 ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011027746 ՀՎՀՀ 02507171	«Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ ք.Երևան, Զաքյան 8 «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Հ/հ՝ 1930041595160100 ՀՎՀՀ 2604367
---	Տնօրեն՝ Վ.Թորոսյան
/ստորագրություն/ Կ.Տ	/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 1
16 դեկտեմբերի 2019թ. կնքված
ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2019/13/1-8 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ապրանքի				
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողի անվանումը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը
9	33111100	Թվային ուլտրաձայնային համակարգ	Logiq F8, ԱՄՆ, Չինաստան	Ուլտրաձայնային սարքավորում Թվային ուլտրաձայնային համակարգ, նախատեսված ընդհանուր ախտորոշման, մանկական էխոսրտագրության, դոպլեր-դուպլեքս հետազոտության, տրանսկրանիալ դոպլերի, մանր դետալների և մակերեսային գոյացությունների հետազոտման համար: Ճառագայթի թվային ձևավորիչը՝ 12 բիթ Դինամիկ տիրույթը՝ 265 ԴԲ Լայնաշերտ և մուլտիհաճախականության սկանավորման առկայություն Էխո-ազդանշանների զուգահեռ մշակման առկայություն Էխո-ազդանշանների քառալիքանի մշակման առկայություն Միաժամանակ փոխանցվող ֆոկուսային ազդանշանների թիվը՝ 8 Սկանավորման խորությունը՝ 33 սմ Պատկերի մեծացում մասշտաբի իրական ժամանակում՝ 20 անգամ B-ռեժիմի առկայություն · Կեղծ գունավորման քարտեզների քանակը՝ 9 · Կադրերի առավելագույն հաճախականությունը՝ 1400 կադր/վրկ M-ռեժիմի առկայություն · B- և M- ռեժիմների համակցում, · B-, M- և գունավոր դոպլեր ռեժիմների համակցում, Իմպուլս-ալիքային դոպլերի առկայություն (PW) · Կեղծ գունավորման քարտեզների քանակը՝ 6 · Անկյան կորեկցիան՝ +/-90o, քայլը՝ 1o · PRF տիրույթը՝ 300-ից 27900 Հց., · Հայտնաբերվող մաքսիմալ արագությունը՝ 66 մ/վրկ. · Հայտնաբերվող մինիմալ արագությունը՝ 0,1 սմ/վրկ. Անընդհատ-ալիքային դոպլերի առկայություն (CW) · Հայտնաբերվող մաքսիմալ արագությունը 61 մ/վրկ. · Հայտնաբերվող մինիմալ արագությունը՝ 0,1 սմ/վրկ. Գունավոր դոպլերի առկայություն · PRF տիրույթը՝ 100-ից 25000 Հց

				· Հայտնաբերվող մաքսիմալ արագությունը՝ 181 սմ/վրկ. · Հայտնաբերվող մինիմալ արագությունը՝ 2 սմ/վրկ. · Գունավորման քարտեզների քանակը՝ 14 · Գունավոր դոպլեր ռեժիմում կադրերի հաճախականությունը/վրկ՝ 460 Էներգետիկ դոպլերի առկայություն (PD) · PRF տիրույթը ոչ պակաս քան՝ 100-ից 25000 Հց. · Գունային քարտեզների քանակը՝ 14 · Էներգետիկ դոպլեր ռեժիմում կադրերի հաճախականությունը/վրկ՝ 460 Ուղղորդված էներգետիկ դոպլերի առկայություն Հյուսվածքային դոպլերի առկայություն B-, PW - և հյուսվածքային դոպլերի ռեժիմների համակցված պատկերավորումը իրական ժամանակում Հյուսվածքային դոպլեր ռեժիմում կադրերի հաճախականությունը/վրկ՝ 1700 Անոթների հունի՝ բարձր տարածական/ժամանակային լուծմամբ – կատարելագործված դինամիկ հոսքի դոպլերային և/կամ ոչ դոպլերային պատկերավորման ռեժիմի առկայություն Սպեկտրալ դոպլերի ռեժիմում պատկերների ավտոմատիկ օպտիմիզացիայի ծրագրի կամ համարժեք ծրագրային փաթեթի առկայություն Գունավոր և էներգետիկ դոպլերի ռեժիմներում պատկերների ավտոմատ օպտիմիզացիայի ծրագրի կամ համարժեք ծրագրային փաթեթի առկայություն Սկանավորման ընթացքում ռեժիմների ավտոմատ փոփոխության առկայություն Առաջացած արտեֆակտների ճնշման ալգորիթմի կամ համարժեք ծրագրային փաթեթի առկայություն 3D ռեժիմի հնարավորություն 4D ռեժիմի հնարավորություն Ինտիմա Մեդիա կոմպլեքսի ավտոմատ հաշվարկման ծրագրի կամ համարժեք ծրագրային փաթեթի հնարավորություն Էլաստոգրաֆիայի կամ համարժեք ծրագրային փաթեթի հնարավորություն Իրական ժամանակում բարդ բազմաալիքային պատկերավորման առկայություն · Բարդ բազմաալիքային պատկերավորումը B- և գունավոր դոպլեր ռեժիմների համակցումով · Բարդ բազմաալիքային պատկերավորումը B-ռեժիմում կատարելագործված դինամիկ հոսքի ռեժիմի համակցումով Ճշգրիտ պատկերավորում՝ բազմաթիվ կից ուլտրաձայնային զծերի միաժամանակյա մշակում իրական ժամանակում էխոազդանշանի ուժեղացման և աղմուկի նվազման համար, առկայություն · Ճշգրիտ պատկերավորում B-ռեժիմում համակցված արյան հոսքի գունավոր դոպլեր ռեժիմի հետ · Ճշգրիտ պատկերավորում B-ռեժիմում համակցված հյուսվածքային հարմոնիկ ռեժիմի հետ · Ճշգրիտ պատկերավորում B-ռեժիմում համակցված կատարելագործված դինամիկ հոսքի հետ Ինֆորմացիայի պահպանում և արտահանում Ներկառուցված աշխատանքային կայանի առկայություն Կոշտ սկավառակի ծավալը՝ 500ԳԲ Տեսահանգույց՝ 2700 կադր Ստատիկ պատկերների արխիվացում DVD/CD-RW սկավառակի վրա հետևյալ կամ համարժեք ֆորմատներով՝ jpeg, bmp, DICOM Դինամիկ պատկերների արխիվացում կոշտ սկավառակի վրա հետևյալ կամ համարժեք ֆորմատներով՝ MPEG-4, DICOM Թարմ տվյալների պահպանում և վերամշակման հնարավորության առկայություն Կառավարման վահանակ Հեղուկ-բյուրեղային, հպումով կառավարվող էկրան, Անկյունագիծը՝ 9,9” Մոնիտոր TFT մոնիտոր՝ 19” Թույլատվություն ոչ պակաս քան՝ 1280x1024 Մոնիտոր բարձրության ճշգրտման հնարավորության առկայություն Մատակարարման հավաքակազմը՝ Սարք ներբեռնած վերոնշյալ նկարագրված ծրագրերով,

				Տվիչներ՝ 1. Կոնվեքսային տվիչ Հաճախականությունները 2-ից 5 ՄՀց Էլեմենտների քանակը՝ 128 Դիտարկման անկյունը 58 աստիճան, Շառավիղը՝ 60 մմ, 2. Գծային տվիչ Հաճականությունը 6,7-ից 18 ՄՀց Էլեմենտների քանակը՝ 168 3. Սեկտորային տվիչ Հաճականությունը 1,7-ից 4 ՄՀց Սկանավորման անկյունը՝ 120օ Էլեմենտների քանակը՝ 64 4. Միկրոկոնվեքսային տվիչ Հաճականությունը 4-ից 10 ՄՀց Դիտարկման անկյունը՝ 140օ, Միկրոկոնվեքսային տվիչի համար բիոպսիայի բազմանգամյա օգտագործման ծայրակալի առկայություն Թվային սև-սպիտակ տպիչի առկայություն Անհրաժեշտ հզորության անխափան սարքի առկայություն ՈւՀ -ին միացվող 32” մոնիտորի / հեռուստացույցի առկայություն Այլ պայմաններ 24 ամսյա երաշխիքային սպասարկում ամբողջ համակարգի համար, բացառությամբ այն հանգույցների, որոնք չեն հանդիսանում սարքի անբաժանելի մաս, ինչպես նաև՝ տվիչների՝ մաշվածության կամ մեխանիկական վնասումների պատճառով առաջացած թերությունների Տեղադրումը, մոնտաժը և բուժանձնակազմի ուսուցումը կատարվում է արտադրողի կողմից սերտիֆիկացված ինժեների կողմից Ամբողջ երաշխիքային ժամկետի ընթացքում, արտադրողի կողմից սերտիֆիկացված ինժեները 2 ամիսը մեկ անգամ ժամանակացույցով պետք է կատարի համակարգի պրոֆիլակտիկ տեխնիկական սպասարկման աշխատանքներ Օգտագործողի ձեռնարկ ռուսերեն լեզվով Որակի վկայականներ (առկայություն) ISO13485 CE Mark
11	33191100	Ցածր ջերմաստիճանային (Օքսիրան (C2H4O) գազով) մանրէազերծիչ	Kordon Tip, Թուրքիա	Ցածր ջերմաստիճանային (Օքսիրան (C2H4O) գազով) մանրէազերծիչ Մանրէազերծիչը նախատեսված է ճկախողովակների, օպտիկական սարքերի, պոլիմերային, ռետինե, լատեքսային և այլ զգայուն բժշկական պարագաների մանրէազերծման համար, հետագա 6 ամսից մինչև 5 տարի պահպանման ժամկետ ապահովելու համար: Աշխատանքային ջերմաստիճանային տիրույթը՝ 16°C - 54°C: Աշխատանքային ցիկլը՝ 16 ժամ ներառյալ մանրէազերծումը և օդափոխությունը, համաձայն AAMI ստանդարտի: Ունի արագացված ռեժիմ, մինչև 12 ժամ: Մանրէազերծումը հնարավոր է 5-ից մինչև 22 մլ տարողությամբ Օքսիրան (C2H4O) գազի քարթրիջներով կամ սրվակներով: Մանրէազերծիչի խցիկի աշխատանքային չափսերը՝ 35 սմ * 35 սմ, խորությունը՝ 110սմ: Դռան փականը ամուր, վստահելի կողպեքով, կողմնակի ազդեցության պայմաններում բացվելը բացառվում է: Աշխատանքային մոնիտորը տեսանելի, հստակ ժամային և ջերմային տվյալների արտապատկերմամբ: Ապրանքը նոր է, չօգտագործված

	Ապրանքի								
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
							հասցեն	ժամկետը	
9	33111100	Թվային ուլտրաձայնային համակարգ	հատ	17.000.000,00	17.000.000,00	1	Ք. Երևան, Գյուրջյան 10	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից 180 օրացուցային օրերի ընթացքում	
11	33191100	Ցածր ջերմաստիճանային (Օքսիրան (C2H4O) գազով) մանրէազերծիչ	հատ	4.800.000,00	9.600.000,00	1			
						1		Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից մինչև 2019թ. դեկտեմբերի 23:	

ԳՆՈՐԴ

Առողջապահության նախարարություն
Կառավարական տուն 3
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011027746
ՀՎՀՀ 02507171

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ
ք.Երևան, Զաքյան 8
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հ/հ՝ 1930041595160100
ՀՎՀՀ 2604367

Տնօրեն՝ Վ.Թորոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
16 դեկտեմբերի 2019թ. կնքված
ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2019/13/1-8 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի				
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20__թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում	
			դեկտեմբեր	Ընդամենը
5	33111360	Թվային ուլտրաձայնային համակարգ	4.800.000,00	**4.800.000,00**
11	33191100	Ցածր ջերմաստիճանային (Օքսիրան (C2H4O) գազով) մանրէազերծիչ	**4.800.000,00**	**4.800.000,00**
Ընդամենը				

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

ԳՆՈՐԴ
Առողջապահության նախարարություն
Կառավարական տուն 3
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011027746
ՀՎՀՀ 02507171

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ
ք.Երևան, Զաքյան 8
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հ/հ՝ 1930041595160100
ՀՎՀՀ 2604367

Տիգրան Վ.Թորոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
16 դեկտեմբերի 2019թ. կնքված
ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2019/13/1-8 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
16 դեկտեմբերի 2019թ. կնքված
ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2019/13/1-8 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ «ԱՐՄԵԴՏԵԽՆԻԿԱ» ՍՊԸ-Ի ՄԻՋԵՎ 16.12.2019թ. ԿՆՔՎԱԾ «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2019/13/1-8» ԾԱԾԿԱԳՐՈՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 27 Ապրիլի, 2020թ.

Առողջապահության նախարարության աշխատակազմը, ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Լուսինե Քոչարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Արմեդտեխնիկա» ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Վահագն Թորոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով 16.12.2019թ. կնքված «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2019/13/1-8» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.13 կետերը կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի Հավելված 1-ի՝ «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»-ի 9-րդ չափաբաժնի և 11-րդ չափաբաժնի մի մասի համար հաստատել վճարման ժամանակացույց՝ համաձայն սույն Համաձայնագրի Հավելվածի:

2. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը և գործում է մինչև Կողմերի միջև Պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման ավարտը:

3. Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքները և պարտականությունները թողնվում են անփոփոխ:

4. Համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ՎԱՃԱՌՈՂ
Առողջապահության նախարարություն Կառավարական տուն 3 ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն ՀՎՀՀ 02507171	«Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ Իրավ. հասցե՝ ք. Երևան, Զաքյան փ. 8 Գործ. հասցե՝ ք. Երևան, Մ. Հերացի 7 ՀՎՀՀ՝ 02604367 Բանկ՝ Կոնվերսբանկ ՓԲԸ Հ/Հ 1930041595160100 Տնօրեն՝ Վ.Թորոսյան
/ստորագրություն/ Կ.Տ	/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 2
16 դեկտեմբերի 2019թ. կնքված
«ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2019/13/1-8» ծածկագրով պայմանագրի
Հավելված
_____ 2020թ. Կնքված թիվ 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի												
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում									
			ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
9	33111360	Թվային ուլտրաձայնային համակարգ	17.000.000	17.000.000	17.000.000	17.000.000	17.000.000	17.000.000	17.000.000	17.000.000	17.000.000	**17.000.000**
11	33191100	Ցածր ջերմաստիճանային (Օքսիրան (C2H4O) գազով) մանրէազերծիչ	4.800.000	4.800.000	4.800.000	4.800.000	4.800.000	4.800.000	4.800.000	4.800.000	4.800.000	**4.800.000**
Ընդամենը			**21.800.000**	**2.000.000**	**2.000.000**	**21.800.000**	**21.800.000**	**21.800.000**	**21.800.000**	**21.800.000**	**21.800.000**	**21.800.000**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Առողջապահության նախարարություն
Կառավարական տուն 3
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02507171

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ
Իրավ. հասցե՝ ք. Երևան, Զաքյան փ. 8
Գործ. հասցե՝ ք. Երևան, Մ. Հերացի 7
ՀՎՀՀ՝ 02604367
Բանկ՝ Կոնվերսբանկ ՓԲԸ
Հ/Հ 1930041595160100
Տնօրեն՝ Վ.Փորոյան

/ստորագրություն/
Կ.Տ